

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 16

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

07.08.2017թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդյանը - մարզպետի տեղակալ
- Հ.Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն.Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Ա.Բեջանյանը, Վ.Ջադինյանը, Մ.Սայադյանը, Ա.Ջանազյանը, Ժ.Ղազարյանը, Գ.Հակոբյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերդյանը, Ա.Սահակյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Ադիյանը, Վ.Դոխոյանը, Ս. Խեչումյանը, Ա. Բաղդասարյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա.Մանուկյանը - մարզպետի խորհրդական
- Ա.Սարգսյանը - մարզպետի օգնական
- Տ.Էվինյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ`

1. Համայնքների կարող ուժերի համախմբում համայնքների ղեկավարների շուրջ
/Ա. Նալբանդյան/
2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին
/Ջեկ. Ն. Սարգսյան/
3. Ս/թ հուլիսի 29-ի համապետական շաբաթօրյակի կազմակերպման աշխատանքների մասին
/Ջեկ. Հ. Թադևոսյան/
4. ՀՀ Վարչապետի մոտ 2017 թ. հունիսի 30-ին կայացած խորհրդակցության արձանագրության 6-րդ կետի կատարողականի մասին
/Ջեկ. Լ. Ասլանյան/
5. Համայնքների սեփական եկամուտների հավաքագրման մասին
/Ջեկ. Հ. Պապոյան/
6. Մարզում գյուղատնտեսական աշխատանքների կատարման ընթացքի մասին
/Ջեկ. Գ. Հակոբյան/
7. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց`

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բաղդյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին`

Համայնքներում կարող ուժերի համախմբման նպատակով 20-օրյա ժամկետում կազմակերպել գույքագրման աշխատանքներ, վերհանել մարդկային և այլ ռեսուրսները, ուսումնասիրել վերջին 1 տարվա

ընթացքում տնտեսական շարժը և մինչև տարեվերջ կանխատեսվող սպասելիքները, անհրաժեշտության դեպքում կազմակերպել քննարկումներ և ներկայացնել առաջարկություններ:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշների ապահովման ուղղությամբ:

3. ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական Լ. Ասլանյանին՝

ՀՀ ԿԱ Քաղաքաշինության Պետական Կոմիտեի աղետի գոտու հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջիկա նիստում առաջարկել քննարկելու ՀՀ Վարչապետի 30.06.2017թ-ի խորհրդակցության արձանագրությամբ տրված հանձնարարականների հարցը:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝

Շրջաբերականով դիմել Լոռու մարզի երկաթուղու հարակից համայնքների ղեկավարներին անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու երկաթուղու անվտանգ շահագործումը և բնակչության անվտանգությունը ապահովելու նպատակով:

ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ